

ՍԻՐԱ, ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

Է. ՏԱՐԻ - ՆԱՐ ՇՐՋԱՆ

1934-ՓԵՏՐՈՒԱՐ

Թիկ 2

ԿՈՆԴԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԽՈՐԷՆ ԾՍ.Ո.Ս.Յ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ Ս.ՆՀԱ.ՍՍ.ՆԵԼԻ ԿԱՄՈՔԻ Ա.ՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՍ.ՊԵՏ ԵՒ ԿԱ.ԹՈՒՂ.ԻԿՈՍ Ս.ՄԵՆԱՅՆ ՀՈ.ՅՈՅ ԾՍ.Յ.Ս.ԳՈՅՆ ՊԱ.ՏՐԻ.Ո.Ր.Բ ՀՈ.ՄՈ.ԶԳ.Ո.ԿՈ.Ն ՆՈԽԱ.ՄԵԾՈ.Ր Ս.ԹՈՒՈՅ Ա.ՐԱ.ՐԱ.Տ-ԵՍ.Ն Ա.Ո.Ս.ՔԵԼ.Օ.ԿՈ.Ն ՄՈ.ՅՐ ԵԿԵՂ.ԵՑԻՈՅ ՄՐԲՈՅ ԿԱ.ԹՈՒՂ.ԻԿԵ ԷԶՄԻ.ԾՆԻ

Առաջնորդաց Մերոց եւ Հոգեւոր պատօնէից, Երեսփոխանական ժողովոց, Կեդրոնական եւ Գալառական վարչութեանց եւ ամենայն հաւատացելոց ի վիճակս Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ, որք յԵվրոպայ, յԱմերիկայ, յԵգիպտոս, ի Պարսկաստան, յիրաք եւ յայրու, ընորիք, սէր եւ խաղաղութիւն Տեառն եւ ողջոյն Հայրապետական եւ օրինութիւն:

Նախ որպէս նախանդամ Գերազոյն Հոգեւոր Խորհրդոյ եւ այժմ որպէս ընտրեալ Հայրապետ եւ Գլուխ Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ, ի բանի մի ամաց հետև տեսանեմք զայնապիսի ժխուր Երեւոյրս իրադարձութեանց ի վիճակս առտասահմանեան Հայոց, որք համակեն զիրտ Մեր եւ զիզի վեօֆ եւ ՏՏՏՄՈՒԹԵԱՄՔ: Գրեարէ յամենայն վիճակս Մեր ի սփիւրս տեսանեմք զբարձրացուցեալ զգլուխ իւր հոգի Երկարակութեան եւ կուսակցական վարագոյն պայմանաց, բաժանելով յերկուս ժողովուրդ մեր եւ զործադրելով հակառակ միմեանց զայնապիսի արարս, որք վնասակար են եւ բեկանն զանուն եւ զպատի ազգի մերոյ յաշս օսար ազգաց, յորոց միջի բնակեալ կան: Ի կրից մղեալ, պղտորեալ եւ անյստակ մօօ կատարին դէպէ եւ արար, որք չեն վայել երբէմ քաղաքակիրք եւ յառաջադէմ ազգաց, որպիսիք են սպանութիւնն, ծեծ եւ անպատութիւնն ուղղեալ ոչ միայն ընդդէմ աշխարհականաց այլ եւ սրբազնազործ պատօնէից:

Տիսուր Երեւոյրք այսպիսիք յանախեալ եւ հասեալ են յաստինան այլանդակութեան մանաւանդ ի վերջին ժամանակս ընդ պատրուակաւ զործադրութեան եռագոյնն դրուի: Անտեղի է հրահրել զիկրս յանուն նորա եւ բաժանել զազգ մեր յերկուս բանակս, որք որպէս թենամիս եւ զիակառակորդս ընդդէմ միմեանց կան, մինչ զի ումանիք ի պետութեանց սիխեալ եղեն արգելով զգործադրութիւնն նորա, որպէս զիսուվութեանն պատճառի:

Արտայայտութիւնն յախուռն կրից կերպաւորեալ ի զործողութիւնս բրոնութեան անուանարկութեան եւ խոռվութեան յարուցանն զեղ եւ զապաւաւանս ի բազում ազգայինն մեր, նեռու մղելով զնոսա ի զործակցութիւնն ազգաշինութեան, եւ զարբուցանն զարհամարհանս եւ զատելութիւնն ի մէջ օսարաց վասն անհամբոյր եւ խոռվարաց արարմանց:

Հատուածք մեր ի զարդավայրս ի նետեանս այդպիսի հակամարտութեանց եւ Երկարակութեանց առաւել եւ առաւել Տռնիին ի մասունս, վա-

նելով յինքնանց զիոնի համերաշխութեան եւ փոխադարձ զիջողութեան եւ որպէս բժնամիք զմիմեամբ ելանելով, վերածեն զիեանս իւրեանց յիսկական խառնակութիւն բարելոնեան, կորուսանելով զունակութիւն իմանալոյ զիեզուս միմեանց ի համագործակցութիւն, ի մտաւոր եւ ի բարոյական յառաջադիմութիւն ընդհանրութեան:

Հարուածք, զորս ընկալաւ ժողովուրդ մեր ի հետեւանս ահաւոր պատերազմին, շարունակին եւ այժմ զալ ի վերայ նորա ի զաղրավայրս ի ձեռն երկպառակութեան եւ անկոպար կուսակցական խոռովութեանց, զլատելով զիարողութիւն նորա ի բուժումն վիրաց եւ ի յառաջադիմութիւն կենաց յօսար սահմանս: Ծառ նղակոնոր կարօքի խնամոց եւ հոգատարութեան եւ չկարէ դիմանալ նորանոր հարուածոց:

Սյուռ Հայրապետական կոնդակաւ մերով, որպէս հայր հաւատացելոց եւ Գլուխ Հայաստանեաց Սուամելական Ս. Եկեղեցւոյ, յորդորեմք զամենեսին ի զգաստութիւն եւ ի խաղաղ զործակցութիւն: Հաւաստիք եւ հիմունք յառաջադէմ զոյութեան եւ պահպանութեան ազգիս ի ափիւս ի միութեան է միայն, զի անմիութիւն ծնող է չարեաց ըստ բաղրախօս մատենագրին, որպէս եւ ի կեանս ձեր տեսանեմք:

Պատուիրեմք ամենայն Սուածնորդաց եւ Հոգեւոր պատօնելից աւրասահմանեան վիճակաց Մերոց եւ յորդորեմք զԵրեսփոխանական ժողովս, զԿեդրոնական եւ զԳաւառական վարչութիւնս հեռու մնալ ի կուսակցական եւ ի բաղաբական պայխարաց, չզործադրել զեռազոյն դրուս եւ կամ զայլ ինչ նշանակ, որք ունին զբնոյր բաղաբական, զի Եկեղեցին եւ վարչական հաստատութիւնն նորա չեն ասպարէզ բաղաբական եւ կուսակցական պայխարաց, այլ հոգեւոր շինութեան եւ խաղաղութեան:

Որդեակի իմ սիրելիք, ի մի զումարեցէք զամենայն կարողութիւնս ժողովրդեան մերոյ ի շինութիւն եւ ի բարգաւանումն դպրոցաց, աստուածահանոյ հաստատութեանց, մայրենի լեզուի, ի ծաղկումն գրականութեան եւ ի պայծառութիւն Եկեղեցւոյ, զի սուս են առհաւատչեայք եւ ապացոյց զիտակցական միութեան եւ պահպանութեան ազգիս ի մէջ հեռաւոր եւ այլակեզու ժողովրդից:

Պատուիրեմք Սուածնորդաց Մերոց ընթեռնուլ զերշաբերական կոնդակս զայս յամենայն Եկեղեցիս եւ յաղօքատունս, որք ընդ իշխանութեամբ իւրեանց են, այլ եւ ի սոյն միսս բարոզել յունկն հաւատացելոց եւ զնոյնն առնել պատուիրել ամենայն հոգեւորականաց, զուն զործելով բառնալ զլնասակար կըրճիմն երկպառակութեան ի միջոյ:

Մաղթեմք, զի Հոգի Ս.սուծոյ, որ ի խաղաղութեան միայն երեւի եւ ոչ յամպրոպս եւ ի փորորիկս ըստ քրոց, հանգիցէ ի վերայ ձեր եւ ի վերայ ամենայն հոգեւոր զաւակաց Մերոց ի ափիւս, ամէն:

Ի 126 Նոյեմբերի 1933 ամի

Հայ Տումարիս Ռ.32%

Ի Հայրապետութեան Մերոց յԲ. ամի
Արքանան Մայր Արքո. Ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ

Թ. 1841

(Խոկականին գրայ ոսորագրուած է.)

ԽՈՐԷՆ Ա.

ԿՈ.ԹՈՂ.ԻԿՈՍ Ա.ՄԵՆԱՅՆ ՀԱ.ՅՈՅ